ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2019թ. թիվ 631-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊՓԲԸ-Ի
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԲԻՆԵՏԸ ՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետի «է» պարբերության պահանջների՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը փակել «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում գործող տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետը՝ Վանաձոր քաղաքի տուբերկուլոզային արտահիվանդանոցային ծառայությունն իրականացնելով «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա», «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» և «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների միջոցով:

2. Որոշման 1-ին կետում նշված գործընթացն իրականացնելիս ապահովել նշված կաբինետում առկա գույքի, բժշկական պարագաների, ինչպես նաև բժշկի և բուժքրոջ հաստիքների տեղափոխումը «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրենին՝

«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի հաստիքացուցակում կատարել լրացումներ՝ հաշվի առնելով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի բուժանձնակազմի տեղափոխման գործընթացը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ